Բաց դռների օր Գեղարքունիքի մարզում

16.02.2012 13:37

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը, Գեղարքունիքի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի հետ համատեղ, սույն թվականի փետրվարի 25-ին, ժամը 12.00-16.30, կազմակերպում է Բաց դռների օր Գեղարքունիք մարզում: Փաստաբանների պալատի փաստաբանները քաղաքացիներին կտրամադրեն իրավախորհրդատվություն քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտների, այդ թվում՝ ժառանգության, սեփականության իրավունքի գրանցման, նպաստների նշանակման, ամուսնաընտանեկան, ճանապարհատրանսպորտային և այլ իրավական հարցերի շուրջ:

Գեղարքունիքի մարզում իրենց աջակցությունը ցուցաբերել ցանկացող Երևան քաղաքի փաստաբանները կապահովվեն տրանսպորտով և սննդով:

Միջոցառումը տեղի կունենա ՇՊԱԿ գրասենյակում՝ ք.Գավառ, Բոշնաղյան 1/1 հասցեում:

Գրանցելու համար խնդրում ենք զանգահարել 54 71 28, 56 45 24 ներքին 105:

Հարգանքով՝

Փաստաբանների պալատ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })